

Ա Է Ե Տ Ա Բ Է Բ



«ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1894

ԹԻՒ 7

ԾԱՂԻԿԻ ՕՐԵՐ

Ծաղիկի օրերը հիմա կ'անցնին, և կը յուսամ որ կրնաք դաշտերը ելլել և զանոնք վայելել: Աստուած ինչո՞ւ նկարեց ծաղիկները իրենց գեղեցիկ դոյներով և լեցուց զանոնք անուշ հոտով: Մեղունքը հրապուրելու համար որպէս զի գիանան թէ ուրկէ՞ ժողկերու են իւրենց մեղրը, կրնան ըսելու մանք: Այո, այդ է մէկ պատճառը, բայց կարծեմ աւելի մեծ պատճառ մըն է մարդոց սիրտերը ուրախացնել ոչ խարհա հրապուրել ընելով: Եթէ ունիս հիւանդ դրացի մը որ չկրնար ելլել դաշտերը ուր կ'աճին ծաղիկները, փունջ մը ժողվէ և անոր տար զանոնք:

ԳՈՐԾԸ ԱՂԵԿ ԸՆՆԸ

Պատմութիւն մը կը պատմուի երիտասարդի մը վրայ որ հիւանութիւն ընտրեց իրեն արհեստ: Մաստիկ և խղճմտութեամբ կ'աշխատէր, բայց նաև պարապոյ վայրկեանները կու տար ուսման, և կը ջանար իր միտքը մշակել: Օր մը մինչ այդ երիտասարդը կը հարթէր տախտակ մը որ դատարարի նստարանի մը մէկ մասը պիտի կազմէր, բարեկամ մը, անոր սաստիկ աշխատութիւնը դիտելով, հարցուց,

«Ինչո՞ւ այդչափ աշխատութիւն կու տաս այդ տախտակը հարթելու համար?»

Անմիջապէս երիտասարդ հիւանդ պատասխանեց,

«Որովհետև կ'ուզեմ որ հարթ ըլլայ երբ որ մը վրան նստիմ:»

Իր բարեկամը խնդաց, և այդ կատակին այնչափ հանեցաւ որ իր խառութիւն մէջ պատմեց, և հիւս երիտասարդը քիչ չժաղրուեցաւ «դատարո-



ԾԱՂԻԿԵՐ

րի նստարան» ին համար: Մակայն նա միշտ կը պատասխանէր հանդարտութեամբ,

«Սպասեցէք և տեսէք: Շահողը


պէտք է խնդայ, և դեռ անոր վրայ կրնամ նստիլ:»

Եւ որ մը նա նստաւ այդ նստարանի վրայ էրն դատարար, և դժուար չէ հա-

ւատալ թէ նա որ հաւատարմութեամբ հիւսնութիւն կ'ընէր՝ արդարութեամբ դատարարութիւն պիտի ընէր :

Ուրիշ պատմութիւն մը կը պատմուի մէկու մը վրայ որ գործ կը փնտռէր : Մարդ մը վարձեց զնա իր տան ետեւի գաւիթին ցանկապատին վրայ քանի մը կոշա տախտակ դամելու համար , ըսելով որ ամենէն ածան և դիւրին եղանակով ընէ զայն որովհետև միայն սողար մը (24 դահեկան) պիտի վճարէ : Մարդը սկսաւ աշխատիլ , տախտակները հարթեց , և ճարտարութեամբ գամեց զանոնք : Իր աերը եկաւ և սիրար նեղացաւ , ըսաւ անոր թէ չէր ուզեր որ այսչափ բաւ ընէր գործը , և մէկ տողարէն սէնթ մը աւելի պիտի չվճարէ : Գործաւորին համար տարբերութիւն չէր ընէր այդ : Տողարէն աւելի չէր պահանջեր , բայց գործը աչի ընէր կ'ուզէր , և իր ուզածին պէս ըրաւ . ցանկապատը լմնցուց գեղեցկապէս , տողարը առաւ և գնաց : Շատ առնն ետքը , զինք աշխատցնող մարդը գործակատար եղաւ մեծ հանրօգուտ շէնքի մը կառուցման համար : Այլ և այլ մարդիկ անոր դիմում ըրին այդ գործին համար , սակայն յանձնուեցաւ անոր որ ցանկապատին տախտակները հարթեց , և այս եղաւ ազդեցութեամբն այն անձին որ ի զուր ջանաց իր ցանկապատին շինութիւնը անոր հարեանցի կատարել տալ : Գիտէր թէ նա որ երբեք չընէր ստորին գործ մը , այլ մանաւանդ ինչ որ ընէ՝ աղէկ կ'ուզէ ընել մինչև անգամ երբ վարձ չառնէ , աղէկ չէնք պիտի կառուցանէ :

Վերջապէս ամենէն շահաւոր ընթացքն է ամէն բան խղճմտութեամբ և աղէկ ընել : Այսօր մեզ կրնայ դիւրին թուիլ բան մը մատին ծայրովը ընել , սակայն այս կերպով կատարուած գործը երբեք չյաջողիր : Շատ կը գտնուին այնպիսի անձինք որ կրնան ստորին գործ ընել , որ յօժար են ընել զայն , և պիտի ընեն , եթէ միշտ հսկես անոնց վրայ . բայց մարդ որչափ կը բերկրի երբեք զանոնքով մէկը որուն անկարելի է ընել տալ ստորին , հարեանցի աշխատութիւն պահանջող գործ մը , այլ որ ամէն գործ կ'ուզէ աղէկ ընել , ինչ վարձք որ տաս անոր : Երբ գտնես այնպիսի անձ մը՝ նշան դիր անոր վրայ , վասն զի օր մը պէտք կ'ունենաս մարդու մը որ կը գործէ առանց հսկողութեան և որուն չես կրնար դէշ գործ ընել տալ :



գոց և թէ՛ օտար երկիրներու մէջ կրնական նպատակներու համար տուաւ 47,000 տողարէ , կամ իբր 10,700 Օմբ : ոսկիէ աւելի մեծ գումար մը , որուն 2,500 ոսկին Պրոտ Բնկերութեան յանձնուեցաւ : Այդ եկեղեցին կազմուեցաւ 1669ին , և նոյն տարին շինուեցաւ իր առաջին շէնքը , որ միայն 60 տարի կանգուն մնաց :

Երկրորդ եկեղեցին , որ շինուեցաւ 1729 ին , տակաւին կը կենայ , բայց ա՛լ չգործածուիր իբրև եկեղեցի : Ժամանակ մը կառավարութիւնը վարձեց զայն , բայց հիմա վերածուած է պատմական թանգարանի մը ուր կը պահուին Նոր Անգլիոյ (Միացեալ Նահանգաց հիւսիսային արևելեան մասը) պատմութեան առաջին տարիներուն յատուկ հրատարակումներ : Պատկերին մէջի սիրուն եկեղեցին շինուեցաւ իբր 20 տարի առաջ , և միւս շէնքէն զա-



ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑՆԵՐ ՊՈՍԹՐԵՆԻ ՄԷՋ

ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑՆԵՐ ՊՈՍԹՐԵՆԻ ՄԷՋ
Այս երեսին վրայ կը դնենք Ամերիկայի Պոսթըն քաղաքին ամենէն նշանաւոր եկեղեցիներէն երկուքին պատկերները : Բարձր աշտարակ ունեցողը , որ կը կոչուի Օլա Սաութհ Զըրը , Ժողովականներուն է , եկեղեցական կազմակերպութիւնը որուն կը վերաբերի այս եկեղեցին , Պոսթընի 29 Ժողովական եկեղեցիներուն ամենէն հինն է մէկէն ի գաւա , և ամենէն հարուստը : 1892 ին թէ՛ Միացեալ Նահան-

Նազանելու համար կը կոչուի Նոր Օլա Սաութհ Զըրը : 1892 տարւոյն վախճանին 564 անգամ ունէր : Միւս եկեղեցին կը վերաբերի եպիսկոպոսական յարանուանութեան և կը կոչուի Թրինիթի Զըրը : Սա՛ եկեղեցին էր ձկնիկա Պրոտ քաւ պիսկոպոսին որ քանի մը ամիս առաջ մեռաւ : Զիկնիս Պրոտ Կապուտեց Նահանգ ին եպիսկոպոս եղաւ մեզնեկէն քիչ առաջ , և ամենէն աւելի պիտի յիշուի իբրև հովի Թրինիթի եկեղե-

ցիւրն : Ուրիշներ , ինչպէս Մր. Պիշըր և Տր. Թաւմէյճ , կարելի է իրմէ աւելի ճարտարախօս եղած ըլլան , սակայն հիմա չկայ Ամերիկացի քարոզիչ մը որ Ֆիլիպս Պրուքս եպիսկոպոսին չափ ազդեցութիւն ունեցած ըլլայ բանգէս մարդոց վրայ :

ԱԶԳԻ ԱՌՁԵՒ ԾԱՌԱՍԵՒ

Անցեալ շարժու քաղաքին վարերը գտնուած գրասենեակ մը երթալով , կ'ըսէ բարեկամ մը , տեսայ երկու տղաք որ դբաղած էին նամակի պահարաններու հասցէներ գրելով , կամ լաւ ևս՝ անոնցմէ մին զբաղած էր այդ գործով , և միւսը գրիչը ձեռքը՝ պատահանէն դուրս կը նայեր :

Իրենց տէրը մօտը նստած էր , և երբ իր վրայ նայեցայ , ժպտեցաւ :

« Այս երկու տղաքներէն ո՞րը կը կարծես թէ աւելի լաւ կ'աշխատի , աւելի բանի կու գայ , » հարցուց ինձ ցած ձայնով :

« Ինձի կու գայ թէ այն որ հիմա կ'աշխատի , » պատասխանեցի :

« Ո՛չ , այդ պատանին որ հիմա պատահանէն դուրս կը նայի , կը կարծէ թէ ըրածը անփնաս բան մըն է , կը տեսնե՞ս , աչքիս առջևը կ'ընէ այդպէս : Միւս կողմէ , երբ աչքս անոնց վրայ է , միւս տղան ամենէն ժբաջանն է . սակայն կ'իմանամ որ երբ քովը չեմ գործ չընեմ : Այնպէս որ իր այդ յանցանքին վրայ կ'աւելցնէ խաբերայութիւն : Իրեն ամեննին բան մը չեմ վստահիր երբ աչքիս առջևը չէ : »

« Ինձ կը թուի թէ ոչ մէկը շատ բանի կու գայ : »

« Շիտակը , » պատասխանեց անմիջապէս , « այն տղան որ միշտ կ'աշխատի՝ լաւագոյն տղան է . սակայն այն տղան որ միայն գիտուած ատեն կ'աշխատի , և չես կրնար վստահ ըլլալ թէ արդեօք պիտի աշխատի՝ երբ հսկողութիւն չկայ , անտանեքի է : »

Չայս ըսող մարդը աշխարհը լաւ կը ճանչնար . գիտէր թէ ինչ բանի վրայ կը խօսէր , և թերևս մեր փոքրիկ ընթերցողներուն օգտակար ըլլան անոր խօսքերը :

ԿՈՒՍԱՄԱ

Կոթամա Գլխաւորական կրօնքին հանրաժանօթ հիմնադիրն է : Բրիտտոսէ վեց հարիւր տարի առաջ ապրեցաւ , և աւանգութիւնը կ'ըսէ թէ որդին էր Հնդիկ իշխանի մը որ կ'իշխէր Սաքիաս կոչուած ցեղին վրայ , թէպէտ ժառանգ էր հօրը գահին բոլոր իրաւունքներէն հրաժարեցաւ և աշխարհէն հէն քաղաքացու որպէս զի ուսման տայ ինքզինքը և մենակեացի կեանք վարէ , իր կրօնքը հիմնեց սա « Կրօնութեանց » վրայ թէ թշուառութիւնը գոյութենէն անբաժան է . թէ գոյութիւնը կիրքէ կամ փափաքէ յառաջ կու գայ . թէ գոյութենէ կրնանք ազատիլ միայն մեր փափաքները ջնջելով , և թէ այս ջնջումով մարդ կը մտնէ ներվանայի երանաւէտ վիճակ , որ քնոյ վիճակ է , և ասոր մէջ կրնանք մանել նախ կարող մը սահմանեալ վիճակներէ անցնելով : Մենք պիտի ըսէինք թէ գոյութենէն ազատուելու ամենէն արագ միջոցն է անձնասպանութիւն , սակայն կոթամա կը հաւատար , ինչպէս իր հետեւողները դեռ կը հաւատան հիմա , հոգեփոխութեան , և թէ անձնասպանին հոգին , աներկբայ շունի մը կամ

բաւական խանձուած էր , սակայն բացի ձեռքին վրայ քանի մը թիթեւ այրուածքներէ քաջ աղջիկը բան մը չուներ : Երբ իրեն հարցուցին թէ ինչ ըրած էր , ըսաւ , « Մայրիկը միշտ ինձի կ'ըսէր որ երբ հանդերձս բռնկի՝ քոչն իրոյ դուրսէն քեան քոչն , մուտ չըլլելու համար : Գիտէի թէ պիտի վառէի լմնայի եթէ սկսէի վաղել : »

Մարդ մը որուն վրայ ատամնաբուժութեան գործողութիւն կը կատարուէր , ա՛լ չարթնցաւ քրորոֆորմին յառաջ բերած թմրութենէն , և ատամնաբուժը անմիջապէս հասկնալով վրտանդը , իր ընկերին օգնութեամբ դէպի դուռը քաշեց գայն և սկսաւ ձիւն նետել երեսը : Սրտին զարկը որ տկարացած էր , հիմա դադարեցաւ , և մարդը թուցաւ և մեռելի պէս եղաւ : « Գլխովայր դարձուցէք , այսպէս կ'ընէ հայրս երբ ա՛լ չեն արթննար , » ըսաւ պատանի մը որ դրան առջև վազեց անսովոր իրարանցումէն : Մարդը գլխովայր դարձուցին մինչև որ կենդանութեան նշաններ տեսնուեցան : Այդ միջոցին պատանիին հայրը որ այդ տեղին ամենէն հոշակաւոր բըժիշկներէն մին էր , վրայ եկաւ և իր որդիին ժամանակին ըսած պատուէրին գործադրուեցէն ետև տուաւ հարկաւոր դեղերը :

Միշտ լաւ է գիտնալ թէ ինչ ընելու է ստիպողական պարագաներու ժամանակ :



ԿՈՒՍԱՄԱ

ուրիշ ստորին կենդանիի մը մարմնոյն մէջ կը մտնէ : Այս պատկերը առնուած է կոթամայի մէկ արձանէն որ Պիրմայի Ռանկուն քաղաքը մեհեանի մը մէջ կը գտնուի , և կը ներկայացնէ զինք մէկ կողմ հակած դիրքով իր մահուան վայրկեանին :

ԱՐՔՈՒՆ ՓՈՒԲՐԻԿՆԵՐ

Ութը տարեկան աղջիկ մը որուն մայրը սորվեցուցած էր անոր թէ ինչ ընելու է երբ հրդեհ պատահի , գիպուածաւ վառած լուցիկ մը ձգեց իր բամբակէ գոգնոցին վրայ , վայրկեանի մը մէջ բոցը երեսը գարկաւ : Փոքրիկը առանց պոռալու կամ կենալու երեսնի վար գետինը նետուեցաւ կապերտին վրայ , ձեռքերը բերնին և քթին սեղմեց , աչքերը գոցեց , և փաթթուեցաւ հաստ բրդեղէն կապերտին մէջ , իր հայրը , անսովոր ձայն մը լսելով , վեր վաղեց և ժամանակին մարեց հեղձուցիչ հրդեհը : Փոքրիկին գոգնոցը մոխիր դարձած էր , հանդերձին առջևը

Միշտ լաւ է գիտնալ թէ ինչ ընելու է ստիպողական պարագաներու ժամանակ :

Միշտ լաւ է գիտնալ թէ ինչ ընելու է ստիպողական պարագաներու ժամանակ :

ԳՈՐԾԵՒԷ ԱՌԱՋ ՄՏԱԾԷ

Կենաց ստիպողական պարագաներու միջոցին փոխանակ պոռալու , գործելու պարտականութիւնը պէտք է մանկանց հասկցնել շատ փոքր հասակէն : Վայրկեանական մտադրութիւն պահանջող պարագաներու ատեն պաղարիւնութիւնը առաքելութիւն մըն է , որ որչափ մշակուի՝ շատ չէ :

Ամերիկա դպրոցի մը մէջ վարժուհի եղող փոքր աղջիկ մը , մինչ իր աշակերտները բոլորաբար էին , որոտուժ պէս ձայն մը լսեց , և պատահանէն նայելով , տեսաւ ձագարի (սօն) ձևով սև ամպ մը որ արագ արագ կը մտնէր : Աղջիկը հասկցաւ անոր ինչ ըլլալը , բայց թէև սիրաւ զբեթէ վերժաւ , վաղէն ձեռնկած երեսը դարձուց աշակերտներուն որ չէին գիտեր

վտանգը, և ըստ հանդարտութեամբ, «Տղաք, շատ անգամ խօսած ենք Հրքովիթի քարայրը այցելելու վրայ: Քիչ մը ժամանակ ձգենք դասերնիս և ընենք այդ այցելութիւնը այս առաւօտ: Կարգեր կազմեցէք և երկու երկու հոն դացէք շուտով: Ես ձեր ետեւէն պիտի գամ պղտիկներով:» Դեռ խօսքը չլմնցուցած մեծ աշակերտները առջև անցած էին, և, անձայն, քարայրին բերանը հասան ճիշդ այն պահուն երբ ամպի սիւնը դաշտին վրայէն կ'անցնէր դռաւրով: Տղաքը սկսան ճշել երբ օդը փոշիով և կոտրած գերաններով լեցուեցաւ. սակայն դեռահաս վարժուհիին մէկ երկու խօսքը հանդարտեցուցին զանոնք և համոզեցին մոտեւ մութ այրը, ուր մնացին ապահով, մինչև որ փոթորիկին գոռումը և թնդիւնը դադարեցաւ: Երբ դուրս ելան արևին լոյսին մէջ, միայն քարերու և տախտակի կոտրներու դէզ մը յայտնի կ'ընէր թէ քիչ առաջ հոն դարոց մը կար: Եթէ դեռահաս վարժուհին հաղորդած ըլլար իր սոսկումը աշակերտներուն, չփոթութիւն յառաջ պիտի դար, և արդիւնքը շատ աղէտալի պիտի ըլլար:

ԽՆԴԻՐԸ ԿԸ ՓՈՌՈՒԻ

Քեռնէն Յայնայ լրագիրը հետևեալ պատմութիւնը կ'ընէ հանգուցեալ Գաղղիացի ծերակուտական Ռընոյի վրայ:

Երբ Ռընօ առաջին անգամ իբրև ծերակուտական փորձիկ եկաւ իր հայրենիքէն որ Պիրենեան լեռանց մէջ կը գտնուի, պանդոկի մը մէջ սենեակ մը վարձեց և ամուսնու վարձքը — հարիւր յիսուն ֆրանք, իբր 700 դահեկան — վճարեց կանխիկ: Պանդոկին տէրը հարցուց անոր թէ կ'ուզէ՞ ընկալադիր:

«Հարկ չէ», պատասխանեց Ռընօ:

«Աստուած տեսած է վճարումը:»

«Աստուծոյ կը հաւատամ», ըսաւ միւսը հեգնութեամբ:

«Անշուշտ», պատասխանեց Ռընօ,

«դուն չե՞ս հաւատար:»

«Ոչ, տէր:»

«Ո՛հ», պատասխանեց ծերակուտականը, «եթէ այդպէս է, հաճեցէք ընկալադիր մը տալ:»

ԱՄԵՆԵՆ ՄԵՍ ԳԱՂԱԳԸ

Լոնտոն աշխարհիս ամենէն մեծ քաղաքն է, և անտարակոյս աւելի բազմամարդ է քան երբեք եղած է քաղաք մը: Գրեթէ վեց միլիոն բնակիչ

ունի, և շարունակ ամէն կողմէ մարդիկ հոն կը խուժեն, և այսպէս կը շատնան անոր բնակիչները հետզհետէ:

Կ'ըսուի թէ Լոնտոն ունի երեք հազար մղոն փողոց, և աշխարհի կեդրոնն է առեւտուրի, ստակի և բարեգործութեան, և թերևս նաև մեղքի մասին: Հոն կու գան ամէն երկրէ մարդիկ, և սակայն Լոնտոնի բնակիչներուն հարիւրին իննսուներու Մեծն Բրիտանիա ծնած են: Միշտ մառախուղ և ծուխ կայ հոն, սակայն շատ հրապոյրներ ունի, և տարւոյն մէկ եղանակին մէջ Լոնտոնի պէս հաճեցի տեղ չկայ: Կ'ըսուի թէ Լոնտոն քաղաքին հին անունը Լինտըն էր, որ կը նշանակէ լճին եզերքի քաղաք: Հին աւանդութիւն մը կը հաւատէ թէ Լոնտոն հիմնուեցաւ Պրիւթէ, սերեալ Ենէասէն որ փախաւ Տրովադայէ երբ այդ քաղաքը Ն. Բ. իբր 1300ին կործանեցաւ Յոյներուն ձեռքով. և թէ ամենէն առաջ կոչուեցաւ Թրոյնտովանթ, այսինքն Նոր Տրովադա: Լրտ թագաւորին ժամանակ, պարիսպով շրջապատուած էր, և կը կոչուէր Լըս'ս Թաուն: Հաւանապէս ամէն ինչ լըս'ս է Լոնտոնի անունը: Պատմագիրներ կը պնդեն թէ Լոնտոնի հողին վրայ քաղաք մը կար Ն. Բ. 1107ին, և գիտենք թէ Հռոմայեցիները Յ. Տ. 61ին հոն քաղաք մը հիմնեցին և Լոնտինիում անունը տուին անոր:

Քանի մը դուռ ունէր հին Լոնտոնի պարիսպը որ թերևս մէկ ծայրէն միւսը մէկուկէս մղոն երկայնութիւն ունեցող քաղաք մը կը շրջապատէր. սակայն ոչ պարիսպ կայ հիմա ոչ ալ դուռ, և այս օրուան Լոնտոնը հետզհետէ տարածուած է մինչև որ կուլ տուած է բոլորաբար գտնուող բազմաթիւ գիւղեր և քաղաքներ, և ամէն տարի տակաւին կը տարածուի և կ'ընդարձակի: Զարմանալի տեղ մըն է այդ քաղաքը, հոն կրնաս տեսնել թէ՛ բարին թէ՛ չարը ամէն ձևերով ու աստիճաններով. քանզի թէ և Լոնտոնի մէջ շատ կորսուածներ փրկուած են, սակայն Լոնտոնի փորձութիւնները շատ հողիներ ալ հրապուրած և առաջնորդած են կործանման և կորստեան: Շատ մարդիկ Լոնտոնի մէջ, ինչպէս ամէն մեծ քաղաքներու մէջ, անիծած են այն օրը երբ իրենց գիւղին խաղաղութիւնը փոխեցին շողիւնին և պերճանքին հետ մեծ քաղաքի մը ուր կորսուեցան եռացող բազմութեան մէջ և կուլ տրուեցան յորձանքէ մը որմէ ալ պատում չկայ:

ՇԱՏ ԽՈՐԱՄԱՆԿ ՇՈՒՆ ՄԸ

Օր մը տիկին մը և իր տղաքը կառք նստած կը պտրտէին Պոսթընի մէկ

գրաստանին մէջ: Իրենց հետ կառքին մէջ կը գտնուէր նաև սիրուն չուս մը, որ նեղութիւն տարուն պատճառաւ կառքէն դուրս հանուեցաւ որպէս զի վազէր: Շուսն իբր մըն մը վազելէ ետքը ուզեց նորէն կառքին մէջ առնուիլ, բայց տղաքը աւելի ուզելով անոր տեղը քան ներկայութիւնը, փոյթ չըրին անոր աղաչանքները: Եւ ահա ճիշ մը լուսեցաւ. տղաքը տեսան որ շուսը կը կաղար երեք ոտքերուն վրայ՝ միւսը վեր բռնելով, իբր թէ շատ ցաւ կը զգար: Անմիջապէս կառքը կայնեցուցին, շուսը ցատկեց մէջը և դնաց փափկութեամբ մը տեղաւորուեցաւ բազմոցի մը վրայ: Սակայն երբ ոտքը քննուեցաւ, բան չուներ: Ընդհակառակն անոր աչքերուն մէջ խորամանկ նայուածք մը կար, որ պարզապէս կը յայտնէր թէ բոլոր կեղծիք էր. շուսը վարպետութիւն մը խաղացած էր որպէս զի տղաքը նորէն կառքն առնէին զինք:

ԱԶԳՎ ՐԱՅ

Խիստ շատ մարդիկ կան որ աշխարհիս մէջ կը քալեն աչքերնին դոյցած և Հեռաւոր բանի մը վրայ կը խորհին, կամ թերևս երբեք չեն խորհիր, մինչ ճիշդ իրենց առջևը և բոլորաբար կան բաներ որ պարտին գրաւել իրենց ու շաղթութիւնը: Այն աստղաբաշխը որ աստղերուն նայելով կը քալէր, փոսի մը մէջ ինկաւ. և շատ մարդիկ, հեռուն գտնուող բանի մը վրայ խորհելով, կը թապալակին դժուարութեանց մէջ որոց առաջքը առնել շատ դիւրին է:

Ամէն օր և օրուան ամէն ժամուն պարտականութիւններ ունինք կատարելու. և մեզ կ'իյնայ աչքերնիս չորս բանալ, դիտել թէ ի՞նչ կ'անցնի կը գառնայ մեր շուրջը, և հասկնալ թէ ի՞նչ կ'ընենք և ինչո՞ւ կ'ընենք:

Փոքրիկներու տրուելու կանոններէն մին է, երբ մարդու մը հետ գործ ունին, ճիշդ անոր երեսը նայիլ, որպէս զի ճաննան զնա երբ նորէն տեսնեն: Ասիակ լաւ կանոն մըն է: Ազէկ է մեր գործը, մեր պարտականութիւնները, մեր հողերը ամէն օր լաւ մը քննել, և ճշգիւ գիտնալ թէ ի՞նչ ընելու ենք և թէ ի՞նչ է զայն լաւագոյն ընելու եղանակը: Այս աշխարհը շատ դէշ աշխարհ մըն է քնացողներուն համար: Եթէ մարդիկ կ'ուզեն մեղք չգործել և Աստուծոյ ծառայել, պարտին ըլլալ զգաստ և արթուն: Բրիտանոս անոնց ալ կ'ըսէ, «Արթուն կեցէք և աղօթե՛ք:»

Ամերիկայի Մեծնարայ Ընկերութեան Արտօճատէր Ջ. Տնօրէն—Խմբագիր Ջ. Ֆինճանճըլար Կոզուշու



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԼԻ
Ի ՅՊԱՐԱՆ Ա. ՅԱԿՈՒ ԳՈՅԱՅԱՆ